ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 17.04 .2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և Ա/Ձ Համլետ Հովսեփյանը, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 19.02.2019թ. կնքված № ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 15060782.1 (տասնհինգ միլիոն վաթսուն հազար յոթ հարյուր ութսուներկու ամբողջ մեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	Ա/Ձ Համլետ Հովսեփյան
ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 46փ,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	42 տ
Հ/Հ 900011144079	ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ
ՀՎՀՀ 02522157	Հ/Հ 1150007382412495
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	ՀՎՀՀ 55807352
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Հ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ГАМЛЕТ ОВСЕПЯН
HAMLET HOVSEPYAN
55807352

Հավելված N 1
№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-2 N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Անվանումը	Չ/մ	Գինը (դրամով)	Ընդհանուր գումար	Անհրաժեշտ քանակը, 2019թ ըստ ամիսների						Քանակը
					ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	
1	մուրաբա (Մուրաբա մորու)	կգ	762.25	8483842.5					5,500	5,630	11,130
2	մուրաբա (Մուրաբա բալի)	կգ	590.92	6576939.6					5,500	5,630	11,130

Հավելված N 2
№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-2 N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ*								
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	մուրաբա (Մուրաբա մորու)	15332230/2					4192375	8483842.5	8483842.5	8483842.5	8483842.5
2	մուրաբա (Մուրաբա բալի)	15332230/5					3250060	6576939.6	6576939.6	6576939.6	6576939.6

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Համլետ Հովսեփյան

Հ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ГАМЛЕТ ОВСЕПЯН
HAMLET HOVSEPYAN
55007352